ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Ջեներալ Սիսթեմս ՍՊԸ-ն ՎԱԲՏ-ԷԱՃԱՊՁԲ-27/21 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
7	-	-	-	-	Ասպիրատոր։ Ավտոմատ չորսալիք ասպիրատոր 12Վ սնման աղբյուրով, նախատեսված օդի և գազային միջավայրի նմուշառման համար՝ օդում աղտոտող նյութերի պարունակության որոշման նպատակով։ Սարքը պետք է հնարավորություն տա իրականացնել նմուշառում սանիտարական և աշխատանքային գոտու օդից, մթնոլորտային օդից, ինչպես նաև արդյունաբերական արտանետումներից։ Ասպիրատորը պետք է ապահովի ինչպես փոշու, այնպես էլ քիմիական նյութերի

						նմուշառման իրականացումը՝ համապատասխանաբար ֆիլտրերի, սորբցիոն խողովակների և քիմիական կլանիչների միջոցով: Աշխատանքային ալիքների քանակը՝ 4: Առավելագույն արտադրողականությունը՝ մինչև 40 դմ³/րոպե: Պետք է նախատեսված լինի հոսքի առանձին կարգավորման հնարավորություն յուրաքանչյուր աշխատանքային ալիքի համար: Հնարավորություն՝ 1–20 դմ³/րոպե միջակայքի մեկ ռոտամետրը փոխարինելու 20–40 դմ³/րոպե միջակայքի ռոտամետրով՝ արտադրողի պատվերով: Սարքը պետք է ունենա առանց յուղի պոմպ/շարժիչ և շարժիչի հզորության կարգավորման հնարավորություն՝ աշխատանքի ընթացքում շարժիչի գերտաքացումից և ավելորդ բեռնվածությունից խուսափելու համար: Սարքը պետք է ունենա էլեկտրոնային շաբաթական ժամանակաչափ՝ մինչև 17 անկախ նմուշառման ծրագրերի սահմանման հնարավորությամբ, ինչպես նաև հետաձգված մեկնարկի գործառույթ:

					Սնուցում՝ 220 Վ AC էլեկտրական ցանցից, ինչպես նաև ներկառուցված մարտկոցից, արտաքին 12 Վ DC աղբյուրից սնուցման հնարավորություն՝ արտադրողի կողմից նախատեսված համապատասխան համալրմամբ։ Շահագործման պայմանները՝ շրջակա օդի ջերմաստիճանը +10-ից մինչև +35 °C, հարաբերական խոնավությունը՝ մինչև 80 %՝ 25 °C ջերմաստիճանի դեպքում, մթնոլորտային ճնշումը՝ 84,0–106,7 կՊա (630–800 մմ սնդիկի սյուն)։ Սարքը պետք է ունենա համապատասխանության հայտարարագիր/դեկլարացիա՝ կիրառելի տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխան։ Երաշխիք՝ առնվազն 1 տարի։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Дженерал Системс ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՎԱՐՏ-ԷԱՃԱՊՁԲ-27/21 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
7					